

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԸ¹

ԽՈՐԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

xorenbask86@gmail.com

ՄՈՒՏՔ

Իրաքանչիւր դարաշրջանի հասարակութիւններում իր իւրայատուկ տեղն ու նշանակութիւնն է ունեցել դրամային շրջանառութիւնը²:

Դրամագիտութիւնը որեւէ քաղաքակիրթ ժողովրդի պատմութեան ուսումնասիրութեան եւ արժեւորումի ուրոյն ուղի ու կերպ է³: Այն կարելի է դիտարկել որպէս տուեալ հասարակութեան տնտեսական եւ քաղաքական գործունեութեան բնութագրիչ մաս. այն կարող է ունենալ նաեւ ընկերամշակութային եւ հասարակական նշանակութիւն: Դրամագիտութեան վերաբերեալ առկայ է բազմազան գրականութիւն⁴:

Իհարկէ թէ թղթադրամները եւ թէ մետաղադրամները նաեւ փաստաթուղթ են⁵: Դրամը կարելի է նաեւ դիտարկել որպէս ժամանակի իրականութիւնը արտայայտող, նաեւ վերականգնող փաստաթուղթ: Այսպէս, Տիգրան Մեծի ժամանակաշրջանի իրողութիւնների մասին Առաքել Պատրիկն ասում է. «...թէւ պատմական որոշակի յիշատակութիւն չունենք, սակայն նրա (Տիգրան Մեծի - Խ. Գ.) դրամները մեզ տալիս են առեղծուածի բանալին⁶: Դրամի պատմական զարգացման ուղու եւ փոփոխութիւնների մասին կարելի է գտնել բազմաբովանդակ գրականութիւն⁷:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետութեան (ՀՀ) կարճատեւ գոյատեւման ընթացքում կատարուած մի շարք գործառնային թում իր առանձնայատուկ տեղն ու դերն ունի դրամի միաւորը, որը պետականութեան խորհրդանիշերից էր ու չնայած յետագայ ելեւմտական ճգնաժամի, կարելւոր տեղ ու նշանակութիւն ունի ընդհանուր հայոց պատմութեան ենթախորքում⁸: Հայաստանի առաջին Հանրապետութիւնը երկար կեանք չունեցաւ: Իր կենսագործունեութեան դէմ ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին մի շարք խոչընդոտներ կային:

Այս յօդուածը խնդիր ունի.-

ա՝ Վերհանել եւ ներկայացնել ՀՀ հռչակումից առաջ եւ ընթացքում թողարկուած եւ կիրառուող թղթադրամները.

բ՝ Դրանք դիտարկել որպէս գեղագիտական, ընկերամշակութային եւ արհեստավարժութեան ցուցիչների վառ օրինակներ.

գ՝ Ուշադրութեան կենտրոնում պահել դրանց տեղը հայոց մշակութային արժեքամակարգում.

դ՝ Ներկայացնել դրանց արտացոլումը հայոց Սարդարապատի Ազգազրութեան Թանգարանի ցուցադրութեան ենթախորքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Ա. Հանրապետութիւնը ստեղծուեց շատ ծանր ռազմաքաղաքական եւ ընկերային տնտեսական պայմաններում: Ա. Համաշխարհային Պատերազմը, 1917ի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը, թուրքական արշաւանքները բացասական կնիք էին թողել երկրի վրայ: Ընդհատուել էին աւանդական կապերը Ռուսաստանի հետ, որի մասն էր կազմում Արեւելեան Հայաստանը: Նորաստեղծ ՀՀ իշխանութիւնները փորձում էին քայլեր ձեռնարկել երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար: 1918 Օգոստոսի 3ին Յովհաննէս Քաջազնունու կողմից խորհրդարանին ներկայացրած կառավարութեան կազմում ելեւմտական նախարարն էր Նաչատուր Կարճիկեանը⁹:

ՀՀ դրամական վիճակը եւս վկայում էր երկրի քառսային դրութեան մասին: Կառավարութիւնը հսկայական թուի հասցրեց չերաշխաւորուած թղթէ դրամի արտադրութիւնը: 1919 Օգոստոսի մէկից մինչեւ տարուայ վերջը շրջանառութեան մէջ կար 362 մլն. ռուբլու թղթադրամ: 1920 Յունուարի մէկից Ապրիլի մէկը բաց թողնուեց 832 մլն. Ռուբլի, իսկ Ապրիլի 1ից մինչեւ Նոյեմբերի 1ը՝ 7 մլրդ. 32 մլն. ռուբլի: Նիստ չափով արժեզրկուած էր թղթէ դրամը¹⁰. «Շատ աւելի բարդ էր դրամական շուկան կարգաւորելու խնդիրը: 1920 թ. Հայաստանում շրջանառութեան մէջ էին անդրկովկասեան բոնէրը, հայկական չէկէրը, իսկ տարուայ վերջից՝ նաեւ Լոնդոնում տպագրուած հայկական դրամանիշերը: Կառավարութիւնն անընդիստ մեծացնում էր շրջանառութեան մէջ գտնուող թղթադրամի ծաւալը, որը վերջինիս տարադրամով ապահովուած չլինելով, արտահանման ու հաղորդակցութեան դժուարութիւնների, ապրանքների պակասի պայմաններում յանգեցնում էր հայկական դրամի արժեզրկմանը եւ գների խելայեղ աճին»¹¹:

Իսկ սա եւս նախապատմութիւն ունէր, որն էլ յետագայում առաջ բերեց դրամական միաւորի այսպիսի անկման միտում ոչ միայն ՀՀում, այլեւ Վրաստանի եւ Ադրբեջանի հանրապետութիւններում: Ինչպէս վկայում է Ն. Ջաւախիշվիլին¹². «Անդրկովկասեան բոնը բազում առաւելութիւններ ունէր Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի դրամական միաւորների նկատմամբ: Մասնաւորապէս. -

1. Այն տարածման շատ աւելի մեծ տարածք ունէր, քան կարող էր ունենալ առանձին հանրապետութեան դրամական միաւորը.
2. Ժողովուրդը արդէն յարմարուել էր դրան եւ առանց երկմտելու այն կիրառում էր Անդրկովկասում եւ երբեմն էլ նրա սահմաններից դուրս (որոշապէս Բաթումիում, որն էլ այն ժամանակ գաւթուած էր Թուրքիայի

կողմից եւ Հիւսիսային Կովկասում), որը վերոնշեալ դրամական միատրի (անդրկովկասեան բոնէրի) շրջանառութեան շրջանակները անհամեմատելիօրէն մեծացնում էր.

3. Այն նպաստում էր արտասահմանեան երկրների հետ առեւտրական տնտեսական կապերի ընդլայնմանը»¹³:

Վերոնշեալ դիտարկումը թոյլ է տալիս ասելի լայն պատկերացում կազմել յետագայ ազգային դրամական միատրի անկման մասին:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԲՈՆԵ

ՀՀն անդրկովկասեան բոնի եւ ձեւաւորման եւ թողարկման գործում գործօն մասնակցութիւն էր ցուցաբերում: Միայն այն, որ բոնի նախագիծը մշակողը հայ ճարտարապետ Գաբրիէլ Տէր-Մելիքովն էր, իսկ էլեւմտական նախարարը՝ Կարճիկեանը, արդէն ասում է շատ բան: Անդրկովկասեան Միութեան վերացումից յետոյ իսկ վրացական կողմը ՀՀի հետ հաշուի էր նստում հաշուի առնելով նաեւ այն, որ անդրկովկասեան բոների վրայ հենց Կարճիկեանի ստորագրութիւնն էր¹⁴: Անդրկովկասեան Կոմիսարիատի թողարկած բոները հանդէս էին գալիս 1, 3, 5, 10, 50, 100, 250 ռուբլի նիշերով. բոլորն էլ 1918ի թողարկման էին եւ բոլորն էլ թղթադրամներ¹⁵: Սրանց դիմերեսը գումարային միատրի նիշն է, տակը ռուսերէն գրութիւն, որտեղ տեղեկացում է թղթադրամի պետական օգտագործման ենթակայ լինելու մասին, սրանից ներքէն՝ ձախ կողմում Գեգեչկորու¹⁶ ստորագրութիւնն էր, իսկ աջ կողմում՝ Կարճիկեանի¹⁷: Նոյն գրութիւնը՝ եռալեզու՝ հայերէն, վրացերէն, ադրբեջաներէն (արաբատառ), գետեղուած էր զարդանախշ օտալի մէջ դարձերեսին: Դիմերեսի ստորին հատուածում պատկերուած էր նաեւ թողարկման տարեթիւը՝ 1918: Հետաքրքիր է այն, որ այս թղթադրամ-բոները եթէ համեմատենք նոյն շրջանի ռուսական եւ նոյնիսկ յետագայ երեք հանրապետութիւնների թողարկած թղթադրամներին, տեսքով ու ձեւով շատ ասելի պարզ էին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԸ

1919ի կեսերին, երբ արդէն անդրկովկասեան բոնը շրջանառութիւնից դուրս պէտք է գար, նախաձեռնուեց Հայաստանի Ա. Հանրապետութեան թղթադրամի թողարկման գործը: Այդ մասին կայ հետաքրքիր հետեւեալ յիշատակումը. «1919թ. Հայաստանի Հանրապետութեան Ելեւմտական Նախարարութիւնը, օժտուելով յատուկ լիազօրութիւններով, Ա. Ֆէթուաճեանին ինժեներ Գր. Աղաբաբեանի¹⁸ հետ ուղարկում է Եւրոպա տպագրելու համար հայկական նամակադրոշմները եւ թղթադրամները: 1919թ. Օգոստոսի վերջին Հռոմում եղած ժամանակ նա (Ֆէթուաճեանը - ի. Գ.) հետաքրքրուում է տեղում դրամ տպելու հնարաւորութիւններով, բայց յայտնի է դառնում, որ անմիջական հնարաւորութիւններ չկան»¹⁹:

Հանրապետության թղթադրամների վրայ հենց Ֆեթուաճեանի կողմից ներկայացրած նկարներն էին լինելու, դրա համար էլ թղթադրամի տպագրման ամբողջ գործընթացների կազմակերպիչներից էր նաեւ նա: Այս մասին եւս կայ հետաքրքիր յիշատակում.

«Դրամների տպագրության ծախսը ապահովում են ԱՄՆ-ից, որտեղից Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Գարոն փոխանցում է 2000 անգլիական ոսկի: Հայաստանի Հանրապետության պատուիրակությունը վաերացնում է Ա. Ֆեթուաճեանի նկարները եւ ուղարկում Լոնդոն անմիջական հսկողության տակ առնելու դրամների տպագրության գործը»²⁰:

Մեջբերումները պարզ են դարձնում Հանրապետության թղթադրամների տպման պատկերը: Հետաքրքիր համեմատություն կարելի է անել անդրկովկասեան բռնների եւ արդէն յետագայում թողարկուած Հայաստանի Հանրապետության թղթադրամների միջեւ: Այսպէս, Անդրկովկասեան Կոմիսարիատի բռները կիրառական նշանակութեանը առաւել ուշադրութիւն դարձնելու միտում ունեն. այս բռները ուղղակի դրամական միաւորներ են, որոնք ունեն որոշակի գոյն եւ ունեն նիշ, որը բռնի արժէքի ցուցիչն է: Սա իհարկէ առաջին հայեացքից սովորական բնոյթ է կրում, սակայն եթէ յետագայ հայկական ռուբլու հետ ենք համեմատում տեսնում ենք, որ վերջիններս հանդէս են եկել, ոչ միայն իբրեւ դրամական միաւոր, այլ նաեւ հետաքրքիր զարդանախշեր ու պատկերներ են կրել: Հայաստանի առաջին Հանրապետութեան կողմից Լոնդոնում թողարկուած թղթադրամները 3 միաւոր ունէին՝ համապատասխանաբար 50, 100 եւ 250 ռուբլի նիշերով: 50 ռուբլի թղթադրամի հիմնագոյնը բաց շագանակագոյն է, դիմերեսին՝ աջ եւ ձախ կողմերում վիշապներ են, կենտրոնում հայերէն, ֆրանսերէն, ռուսերէն գրուած է թղթադրամային միաւորի նիշը՝ այս դէպքում 50, սրա ներքեւում՝ աջից «Ալ[եքսանդր] Խատիսեան» ստորագրութիւնն է, իսկ ձախից՝ «Գր[իգոր] Ջաղերեան»: 100 ռուբլի թղթադրամը կանաչ հիմնագոյնով է, որի դիմերեսին՝ երկու կողային եզրերում զարդանախշ սիւներ կան, սրանց վերին հատուածում արծուի քանդակով: Սրանից ներքեւ սիւնի ներսում պատկերուած է թղթադրամային միաւորի նիշը՝ այս դէպքում 100, իսկ սրա տակը, երկու կողմերում էլ թղթադրամի կեղծելու պատժելիութեան մասին է նշուած եւ թղթադրամի սերիան: Կենտրոնում ծիրանագոյն, ետին պլանում Արարատի ֆոնի վրայ գլխատառերով նշուած է թղթադրամի միաւորի նիշը՝ 100: Դարձերեսը կենտրոնում ունի զարդանախշ շրջան, որի մէջ թուրք ճանկերում արծուի պատկեր է: Ի դէպ, այս նոյն արծիւը նաեւ նամակադրոշմների վրայ է եղել: Դարձերեսի ամբողջ մակերեսը պատուած է հետաքրքիր զարդանախշերով: Երրորդ եւ վերջին թղթադրամը, որը Հայաստանի առաջին Հանրապետութեան

թողարկմանն էր պատկանում եւ ինչպէս միւս երկուսը սա եւս տպուած
Լոնդոնում՝ 250 ռուբլի միաւորով նիշն էր: Սա ուներ բաց շագանակագոյն
հիմնագոյն, որի կողային երկու եզրերին, զարդանախշ սիւների մէջ
՝նիկէատիպ՝ հրեշտակի պատկեր է, սրա գլխավերեւում զարդանախշ
շրջանի մէջ նշուած է թղթադրամի միաւորի նիշը՝ 250, իսկ սրանից վերեւ
նշուած է թղթադրամի սերիան: Կենտրոնում՝ եզրին մօտիկ, գրուած է
Հայաստանի Հանրապետութիւն՝ հայերէն եւ ֆրանսերէն, որի երկու
կողմերում արծուի պատկերներ կան, իսկ ներքեւում կանաչաւուն ֆոնի
վրայ պատկերուած է 250 թիւը: Դարձերեսին՝ նախշազարդ եզրագօտու
մէջ, աջից պատկերուած է թել մանող կին՝ ճախարակով, իսկ ձախ
կողմում պատկերուած է 250 թիւը:

Ահա եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան երեք միաւորով
թղթադրամները, որոնք 1920ի առաջին կեսից սկսեցին կիրառուել:
Մակայն, ինչպէս վերը նշեցինք, ելնելով մի շարք արտաքին եւ ներքին
խնդիրներից եւ երկրի խորհրդայնացման պատճառով, այս թղթա-
դրամները չկարողացան իրենց տարածումը գտնել հայկական տեղական
իրականութեան մէջ: Այդուհանդերձ, Հայաստանի առաջին
Հանրապետութեան թղթադրամները հանդիսանում են հայոց
պետականութեան արտայայտման կարեւորագոյն ցուցիչներից:

Այդ յատկանիշներից գատ կան նաեւ խորհրդանիշ հանդիսացող մի
քանի այլ տարրեր, որոնք այս թղթադրամներով էին հանդէս գալիս:
Այսպէս.-

Ա. Առաջին անգամ Հայաստանի Հանրապետութիւնը ցուցադրեց իր ար-
ժոյթը, չնայած ռուբլու տեսքով, բայց արդէն առանձին պետականութեան
ներքոյ:

Բ. Թղթադրամի միջոցով ծանուցուեց ազգայինը, որը յետագայում առաւել
ակնյայտ էր խորհրդային թղթադրամների վրայ:

Գ. Հայ աւանդական նախշազարդերը, տոտեմային արծիւը եւ թել մանող
ճախարակով հայուհին ինքնին ազգային գաղափարախօսութեան
ցուցիչներ էին:

Ահա այս ամենի կենդանի ցուցադրութիւնն ենք տեսնում Մարդարա-
պատի Հերոսամարտի Յուշահամալիրի, Հայոց Ազգագրութեան եւ Ազա-
տագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանի մայիսեան
հերոսամարտերի եւ Առաջին Հանրապետութեան կայացման պատմու-
թիւնը նկարագրող Թանգարանային կենտրոնական դահլիճում: Դահլիճի
11րդ ցուցափեղկը ամբողջովին պատկերում է տուեալ շրջանի թէ՛ անդր-
կովկասեան բոների տարբեր հաւաքածոների նմուշներ, թէ՛ Առաջին
Հանրապետութեան թղթադրամներից որոշ նմուշներ, որոնք որպէս ազ-
գային պետականութեան խորհրդանիշ են ներկայանում՝ կողքին կրելով
ազգային դրօշը, քիչ վեր միւս պետական խորհրդանիշներից՝ գերբը: Այս

ամբողջությամբ վերականգնում է 1918-1920ի պետական եւ ազգային կառավարման համակարգը՝ ցուցադրելով այն իրականությունը, որի կրողն էին վերոնշեալ ազգային խորհրդանիշները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Օգտագործուել են Սարգսրապատի Հերոսամարտի Յուշահամալիր, Հայոց Ազգագրութեան եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարանի «Դ» ֆոնդի թանգարանային առարկաները. թղթադրամ՝ ՀԱՊԹ 3042 Դ-27/1, 6, 7, ՀԱՊԹ 8299Դ-92 /9, 11, 12, 13, 17, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 41, 46:
- ² Խ. Ա. Մուշեղեան, «Դրամագիտական Մեծարժէք Հաւաքածոներ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2(93), 1981, էջ 298:
- ³ Ա. Յ. Մ. Տոնապետեան, *Էջեր Հայ Դրամագիտութեան Պատմութենէն*, Պէյրոս, United Traders and Printers, 2006, էջ 11:
- ⁴ Առաւել մանրամասն տե՛ս՝ Խ. Ա. Մուշեղեան, *Հայաստանի Դրամական Գանձերը, Հտր. I*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, նաեւ Խ. Ա. Մուշեղեան, «Դրամագիտական Տուեալներ Երեւանի Պատմութեան Վերաբերեալ», *Պատմաբանասիրական Հանդէս*, 3(42), 1968, էջ 27:
- ⁵ Հետաքրքիր է նաեւ այն, որ համաշխարհային փաստաթղթագիտութեան ուսումնասիրութեան գործում Ի. դարի սկզբին «փաստաթուղթ» եզրի առաւել լայն քննարկումներ տեղի ունեցան: Այսպէս բելգիացի գիտնական Պոլ Օտլէն փաստաթուղթը դիտարկելով ընկերային-մշակութաբանութեան ենթախորքում, փաստաթուղթ է կոչում այն ամէնը, ինչը ծառայում է որեւէ իրի յիշողութեան գրանցման, փոխանցման եւ պահպանման, կամ այդ իրը յետագայում ուսումնասիրութեան ներկայացնելու (N. N. Kushnarenko, *Dokumentovedenie: Uchebnik* (Փաստաթղթագիտութեան դասագիրք), 8-е изд., Znaniya, 2008, էջ 68):
- ⁶ Առաքել Ն. Պատրիկ, «Պատմական Հայ Դրօշները», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1 (36), 1967, էջ 161:
- ⁷ Խ. Ա. Մուշեղեան, *Դրամական Շրջանառութիւնը Հայաստանում (Մ.թ.ա. V դ. - մ.թ. XIV դ.)*, Երեւան, 1986:
- ⁸ Դրամը որպէս խորհրդանիշ տե՛ս՝ Հայկ Դեմոյեան, *Հայկական Ազգային Խորհրդանիշները*, Երեւան, 2012, էջ 328-329:
- ⁹ Աշոտ Մելիքեան, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, 1998, էջ 198:
- ¹⁰ Առաւել մանրամասն տե՛ս՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն, *Հտր. VII*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1967, էջ 57-58:
- ¹¹ *Հայոց Պատմութիւն, Հիմնահարցեր*, իւր. Հրաչիկ Սիմոնեան, Երեւան, Զանգակ-97, 2007, էջ 481:
- ¹² Վրացի հեղինակ, ստեղծագործել է Ի. դարում:
- ¹³ Ն. Ջաւախիշվիլի, «Ֆինանսական Համաձայնութիւնները Անդրկովկասեան Հանրապետութիւնների Միջեւ (1918-1919թթ.)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 3 (158), 2001, էջ 137-138:
- ¹⁴ Ջաւախիշվիլի:

¹⁵ F.G. Chichina, *Katalog Bon I Denzakov Rosii, RSFSR, SSSR, Okrayn I Obrazovani* (1769-1927) (Ռուսաստանի թղթադրամի քարտագրացուցակ, ՌՍՖՍՐ, ՍՍՍՐ), Մոսկուա, 1927, էջ 53:

¹⁶ Գեգեչկորի Եզենի Պետրովիչ (1881-1954), վրացի մենշեիկ: 1907-12՝ Գ. պետական դոմայի պատգամաւոր Քուբայիսի Նահանգից: 1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ բուլժ. ժամանակաւոր կառավարութեան Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէի եւ Թիֆլիսի Խորհրդի նախագահութեան անդամ, 1917ի Նոյեմբերից Անդրկովկասեան Կոմիսարիատի նախագահ, 1918ի Մայիսից՝ Վրաստանի մենշեիկեան կառավարութեան Արտաքին Գործերի նախարար: Վրաստանում սովետական իշխանութիւն հաստատուելուց յետոյ վտարուել է Ֆրանսիա (1921ի Մարտ): Գեգեչկորին սովետական իշխանութեան մոլի թշնամի էր: Անդրկովկասեան Կոմիսարիատի կողմից իշխանութիւնը ստանձնելու վերաբերեալ հրամանը Գեգեչկորին ստորագրել էր որպէս Կոմիսարիատի նախագահ, Աշխատանքի եւ Արտաքին Ցարաբերութիւնների Նախարարութեան կոմիսար (Վ. Մելիքեան, «Իշխանութեան Կազմակերպման Հարցը Անդրկովկասում. Կոմիսարիատի Ստեղծումը», *Էրաբեր*, 12, 2011, էջ 18:

¹⁷ Ֆինանսների նախարար՝ 24.07.1918-04.11.1918: Օնուել է էջմիածնում: Մասնագիտութեամբ իրաւաբան. հասարակական պետական ու ազգային-քաղաքական գործիչ: Աւարտել է Գեորգեան Հոգեւոր Ճեմարանը, այնուհետեւ Ս. Պետերբուրգի Իրաւաբանական Վարժարանը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ, գործուն մասնակից ու կազմակերպիչ կամաւորական շարժմանը, Ազգային Բիւրոյին կից գործադիր յանձնաժողովի անդամ, մասնակից համահայկական համագումարի (IX-X 1917) անդամ, նորընտիր Ազգային Խորհրդի: Իբրեւ Մահմանադիր Ժողովի պատգամաւոր մտնում է Մշմի մէջ՝ վարելով Ֆինանսների նախարարի պաշտօնը. անդրկովկասեան բոլոր կրում է նրա ստորագրութիւնը: Կորցնում է հեղինակութիւնը Կարսի անկումից յետոյ (1918 Ապրիլ, Չիսենկելիի կառավարութեան հրամանով): ՀՀ անկախութեան իռչակումից յետոյ տեղափոխում է Երեւան: Քաջազունու կառավարութեան Ֆինանսների, ապա Խնամատարութեան նախարար: Սպանուել է իր աշխատասենեակում Եգոր Տէր-Միկասեանի ձեռքով, Կարսը դաւաճանաբար թուրքերին յանձնելու պատճառաբանութեամբ:

¹⁸ Այս մարդու մասին այլ տեղեկութիւններ գտնել չի յաջողուել:

¹⁹ Լեւոն Չուբասգեան, «Արշակ Ֆեթումանեան», *Հայ Արուեստի Կարպետներ Եւ Կանձեր Հոր. 1*, Երեւան, 2011, էջ 91-92:

²⁰ Նոյն:

BANKNOTES OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA (SUMMARY)

KHOREN GRIGORYAN
xorenask86@gmail.com

The banknote is one of the characteristic features of economic and political activity of a state and its polity. Both banknotes and coins can also be viewed as documents.

During its short existence the first Republic of Armenia issued a national currency which became a symbol of the Armenian state and nationalism, notwithstanding its name (*rubli*), its short-term circulation and the dire financial crises the state faced.

The author details the various currencies and banknotes circulated in the Caucasus during 1918, particularly those of the *bon*, produced in 1918 by the Transcaucasian Commissary with a value of 1, 2, 3, 5, 10, 50, 100, 250, roubles. The author describes the process of producing the Armenian national currency, from the withdrawal of the *bon* from the market to the very decision of initiating the national currency to the painter who designed the banknotes, the printing house in Great Britain which produced it and its eventual circulation. The banknotes issued in London were marked 50, 100 and 250 roubles.

The author describes in detail what each of the banknotes of the Armenian national currency depicted and their significance in terms of symbolism and ethnic identity.

Հայաստանի առաջին Հանրապետության թղթադրամները

